



ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ



ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ Թիվ 1(26), 28 փետրվարի, 2020թ.

ՀՀ ՈՍՏԻՎԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Փետրվարի 19-ից 21-ը Բելառուսի Հանրապետության ՆԳՆ ակադեմիայում տեղի ունեցավ «Հանցավորության դեմ պայքարի և իրավապահ համակարգում կադրերի վերապատրաստման հիմնախնդիրները» թեմայով 20-րդ միջազգային գիտագործնական համաժողովը:

Համաժողովին մասնակցում էին տարբեր երկրների ՆԳՆ ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ, գիտաշխատողներ, դասախոսներ: Բելառուսում էին նաև ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ներկայացուցիչներ՝ Կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մուշեղ Բաբայանը և պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի պետի ժամանակավոր պաշտոնակատար, ոստիկանության փոխգնդապետ Ամալյա Սաֆարյանը: Վերջինս համաժողովին ներկայացավ «Մարդու իրավունքները և ոստիկանությունը դասընթացի նշանակությունը ոստիկանության կադրերի պատրաստման գործընթացում» հոդվածով: Կրթահամալիրի և Բելառուսի ՆԳՆ ակադեմիայի միջև կնքվեց կրթության և գիտության ոլորտում համագործակցության մասին արձանագրություն:

Անդրադառնալով կրթության ոլորտում միջազգային փոխշահավետ համագործակցության ուղիների ընդլայնման անհրաժեշտությանը՝ Մ. Բաբայանը համոզմունք հայտնեց, որ նախաձեռնված նպատակներին հասնելու համար միջազգային առաջատար փորձի ուսումնասիրումն ու կիրառումը կարևոր նախապայմաններ են:

Համաժողովի աշխատանքները շարունակվեցին 9 խմբով, որի ընթացքում քննարկվեցին իրավապահ մարմինների գործունեության տեսական, իրավական, սահմանադրական և պատմական, հանցավորության դեմ քրեադատավարական ասպեկտները, ինչպես նաև վարչական իրավունքի և գործընթացի արդի հիմնահարցերը: Ծավալվեցին արդյունավետ քննարկումներ և մտքերի փոխանակում՝ ուղղված ուսումնական գործընթացի բարելավմանը և արդիականացմանը:



ՄՈԼՂՈՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԳՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՈՍՏԻՎԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐՈՒՄ



Փետրվարի 6-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիր էր այցելել Մոլդովայի Հանրապետության ՆԳՆ «Շտեֆան չել Մարե» ակադեմիայի պատվիրակությունը՝ ուսումնական աշխատանքների զծով առաջին պրոռեկտոր, ոստիկանության գնդապետ Յուրի Օդաժուի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում ներկա էին նաև Վիկտորյա Ժիտարը, Ռուսնակ Կոնստանտինը, Իոն Կորչմարը և Վրաբի Կոռնելիյը:

Հանդիպումը խորհրդանշական էր, քանի որ Մոլդովայի ոստիկանության ակադեմիայի հետ Կրթահամալիրը դեռևս 2018 թվականին համագործակցության արձանագրություն էր կնքել, սակայն առաջին պաշտոնական հանդիպումը տեղի ունեցավ միայն 2020 թվականին, որը միտված էր համագործակցության հետագա քայլերի նախանշմանը:

Հյուրերին ընդունեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մուշեղ Բաբայանը: Հանդիպմանը մասնակցում էին նաև Կրթահամալիրի պետի

առաջին տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Մ. Մարկոսյանը, ուսումնամեթոդական և զարգացման վարչության պետ, ոստիկանության գնդապետ Գ.Գևորգյանը, միջազգային համագործակցության և ՏՏ ներդրման բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Գ. Դավթյանը:

Կրթահամալիրի պետը հյուրերին ներկայացրեց Կրթահամալիրի կառուցվածքը, ուսումնական ծրագրերը և զարգացման տեսլականը:

Հանդիպման ավարտին կողմերը քննարկեցին համագործակցության զարգացման հետագա քայլերը, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք այլ հարցեր:

Այնուհետև հյուրերի համար շրջայց կազմակերպվեց Կրթահամալիրի տարածքով, նրանք ծանոթացան մասնագիտացված լսարաններին, գործող սիմուլյացիոն սենյակներին, ֆիզիկական պատրաստականության դահլիճներին, ինչպես նաև այցելեցին ՀՀ ոստիկանության պատմության թանգարան:

ՈՍՏԻՎԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՆ-ՈՒՄ

Ս. թ. հունվարի 25-ից փետրվարի 8-ն աշխատանքային այցով ԱՄՆ-ում Կանգաս նահանգ էր գործուղվել ոստիկանության պատվիրակությունը՝ ոստիկանության պետի տեղակալ Տիգրան Եսայանի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում ներառված էին մասնակիցներ ՀՀ ոստիկանության կենտրոնական ապարատից և ՀՀ ոստիկանության կրթահամալիրից:

Այցի նպատակն էր ուսումնասիրել ԱՄՆ գործող պարեկային ոստիկանության մոդելը Կանգասի համալսարանի իրավապահ մարմինների ուսումնական կենտրոնում (KLETC): KLETC-ում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ներկայացուցիչները հնարավորություն ունեցան ծանոթանալու դասընթացների ուսումնական ծրագրերին, կիրառվող դասավանդման մեթոդներին, դասախոսական ամձնակազմին, կենտրոնում առկա նյութատեխնիկական բազային և օգտակար այլ տեղեկատվություն ստացան:

Հաջորդիվ, հանդիպումներ տեղի ունեցան նաև Ուիչիտա և Հեյնսոն քաղաքների ոստիկանության ղեկավարության, ինչպես և շերիֆի ու տեղակալների հետ, որի ընթացքում քննարկվեցին ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպման, գործողությունների իրավա-

կան կարգավորումների վերաբերյալ հարցեր: Հայաստանի ոստիկանության պատվիրակությունը եղավ նաև Հեյնսոնի կալանավայրում, 911 օպերատիվ կառավարման կենտրոնում, փորձաքրեագիտական լաբորատորիայում, SWAT հատուկ ջոկատայինների հրազենային սիմուլյատորում և կրակադաշտում:

Այցի ընթացքում Հայաստանի ոստիկանության պատվիրակությունն ստացել և ուսումնասիրել է տարբեր տեսակի փաստաթղթեր ու նյութեր, որոնք կարող են օգտագործվել ոստիկանության պարեկային ծառայության և օպերատիվ կառավարման կենտրոնի ստեղծման համար: Ավելին, նրանք հնարավորություն էր ընձեռնվել ամերիկացի գործընկերների հետ համատեղ մասնակցելու ոստիկանության պարեկային ծառայության հերթափոխներին գործնական փորձի ձեռքբերման նպատակով, ինչը և պատվով իրականացվեց:

Հավելենք, որ փորձի փոխանակման արդյունքում ձեռք բերված գիտելիքները և հմտությունները ՀՀ ոստիկանության ներկայացուցիչների կողմից կկիրարկվեն ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական ծրագրերում՝ ի նպաստ հայաստանյան նոր ձևավորվող պարեկային ոստիկանության կայացման գործի:



ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴԱՍԱԽՈՍԸ ՈՉ ՄԻԱՅՆ ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ Է ԼՍԱՐԱՆԻՆ, ԱՅԼԵՎ ՍՈՎՈՐՈՒՄ ՆՐԱՆԻՑ



Րունվարի 31-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրում տեղի ունեցավ Կրթահամալիրի խորհրդակցական մարմնի ընդլայնված նիստը՝ նվիրված 2019թ. ընթացքում կատարված աշխատանքների ամփոփմանը:

Նիստին մասնակցում էին Կրթահամալիրի ղեկավարությունը և աշխատակիցները՝ Կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մուշեղ Բաբայանի գլխավորությամբ:

Նիստի սկզբում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի տեղակալ, ինքը և կադրերի և ԱՀՏԱ բաժնի պետ, ոստիկանության գնդապետ Մարտիրոս Մու-

րոյան ընթերցեց ՀՀ ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատար, ոստիկանության գնդապետ Արման Սարգսյանի 24.01.2020թ. թիվ 220-Ա հրամանը՝ ըստ որի պարգևատրվել էին «Հավաքների ազատության օրենսդրության կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում» խորագրով ուսումնական ֆիլմի ստեղծման աշխատանքներում Կրթահամալիրի ակտիվ մասնակցություն ցուցաբերած ծառայողները: ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Միսակ Մարկոսյանն ու Կրթահամալիրի

ակադեմիայի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ Ամալյա Սաֆարյանը պարգևատրվեցին «Օրենքի պատվար» մեդալով, իսկ Կրթահամալիրի ակադեմիայի վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոնի դոցենտ, ոստիկանության գնդապետ Վլադիմիր Ավագիմյանն ու Կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկման բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Տաթևիկ Թևոսյանն ստացան դրամական խրախուսանք:

Հնորհավորելով պարգևատրվածներին՝ 2019թ. ընթացքում կատարված աշխատանքներն ամփոփեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մուշեղ Բաբայանը. «Կյանքում ամենամեծ ռիսկը ռիսկի չդիմելն է: Սա շատ տիպիկ է բնորոշում Կրթահամալիրի և այստեղ աշխատող յուրաքանչյուրիս փիճակը: Ինքներդ ինձնից լավ եք հասկանում, որ խելահեղ արագությամբ փոփոխվող, զարգացող հասարակական կյանքում հատկապես կրթության առաջ գոյացող մարտահրավերները պարտադրում են անընդհատ կատարելագործվել, զարգանալ, առաջ շարժվել: Գետի հոսանքին հակառակ քայլելու նման է. հենց

կանգ առանք, ուրեմն արդեն նահանջում ենք»:

Անդրադառնալով կատարված աշխատանքներին՝ կրթահամալիրի պետը հատկապես կարևորեց հաջողությամբ հաղթահարված ինստիտուցիոնալ ավատարմագրման փուլը, որը թիմային աշխատանքի լավագույն դրսևորումն էր՝ համատեղ ու համակարգված աշխատանքի արժանի արդյունքով:

Մ. Բաբայանն իր խոսքում կրկին ընդգծեց պրոֆեսորադասախոսական կազմի դերի կարևորությունը.

- Լավագույն դասախոսը ոչ միայն սովորեցնում է լսարանին, այլև սովորում նրանից: Դասախոսի դերի բարձրացումն անմիջականորեն կախված է մատուցվող նյութի որակից, մատչելիությունից, անընդհատ կատարելագործումից, լսարանը կառավարելու հմտությունից, գնահատման օբյեկտիվությունից, գործընկերների հետ հարաբերություններում օրինակելի վարք դրսևորելուց: Այնքանով, որքանով մեզ կհաջողվի սրանք անել, կբարձրանա նաև մեր անձնական հեղինակությունը:

Հանդիպման ավարտին Կրթահամալիրի պետը հանձնարարականներ տվեց ստորաբաժանումների ղեկավարներին՝ շեշտադրելով գիտական աշխատանքները խթանելու և ընդհանուր կարգապահությունն էլ ավելի ամրապնդելու կարևորությունը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ 28 ՏԱՐԵԿԱՆ Է

«Ժողովուրդները նախ և առաջ իրենց ամենաընտիր որդիները արյունով կորեցն իրենց երկիրը և ապա սրբացած հողի վրա կբարձրացնեն շենքն իրենց անկախության: Այո՞, նախ՝ հերոսների և նահատակների գերեզմանատուն, ապա՝ ազատ և երջանիկ Հայրենիք»:

Գարեգին Նժդեհ

1992թվականի հունվարի 28-ին կառավարությունն ընդունեց «ՀՀ պաշտպանության նախարարության մասին» պատմական որոշումը, ազդարարեց ազգային բանակի ստեղծման սկիզբը: 1992թ. մայիսին պաշտպանության նախարարությունն սկսեց առաջին զորակոչը հանրապետության տարածքում՝ հիմք դնելով բանակը ժամկետային զինծառայողներով համալրելու կայուն ավանդույթի:

Հայաստանի Հանրապետության բանակի կազմավորումն անցել է մի քանի փուլերով: Առաջին փուլը տևել է 1988թ. փետրվարից մինչև 1992թ. մայիս: Այս ժամանակ Ղարաբաղյան շարժման ակտիվացման և հայ-ադրբեջանական հարաբերությունների ծայրաստիճան սրման պայմաններում Հայաստանի և Արցախի բնակչության ռազմական անվտանգության ապահովումը դարձավ ավելի քան հրատապ:

Երկրորդ փուլը տևել է 1992թ. հունիսից 1994թ. մայիս: Այս ժամանակ Հայաստանի և Արցախի հանրապետություններն ագրեսիայի էին ենթարկվում Ադրբեջանի կողմից:

Երրորդ փուլը սկսվել է 1994թ. հունիսից և շարունակվում է մինչ այսօր:

Նորաստեղծ նախարարության ենթակայությանը հանձնվեցին ընդամենը զինվորական չորս միավոր՝ ՆԳՆ պարեկապահակային գունդը, հատուկ նշանակության օպերատիվ գունդը, քաղաքացիական պաշտպանության գունդը և հանրապետական զինկոմիսարիատը: Պաշտպանության նախարարության կենտրոնական ապարատը՝ գլխավոր շտաբը, վարչություններն ու առանձին բաժինները ստեղծվե-

ցին ավելի ուշ:

Հայոց բանակի ստեղծումից հետո առաջին տարիները վկայեցին, որ կա հասարակության, պետության և հայ ժողովրդի գոյության ամենակարևոր երաշխիքը՝ Հայոց բանակը: Հայոց բանակի ստեղծումն ու պատմությունն անբախտելիորեն շաղկապված են հայոց պետականության ստեղծման պատմական իրողությանը, քանզի պետություն և բանակ հասկացությունները միմյանց պայմանավորող են, և դժվար է, եթե չասենք անկարելի, պատկերացնել մեկն առանց մյուսի:

Այսօր Հայաստանի Հանրապետության զինված ուժերը ռազմական անվտանգության համակարգի հիմքը կազմող պետական ռազմական կառույց են և ապահովում են մեր երկրի անկախության, տարածքային ամբողջականության, պետական սահմանների անձեռնմխելիության զինված պաշտպանությունը:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և ընդհանրապես երկրի ռազմական անվտանգության համակարգում ներկայումս ընթանում են լուրջ և ակտիվ բարեփոխումներ, որոնց առաջնահերթություններն են զինված ուժերում գործող ռազմական չափանիշների կատարելագործումը և միջազգային առաքելություններ իրականացնելը:

Հայաստանի զինված ուժերի կամ, այլ կերպ ասած, հայկական բանակի դերակատարությունը չի սպառվում միայն երկրի ու ժողովրդի անվտանգության ապահովմանը նպաստակուղղված զուտ պաշտպանական-ռազմական բնույթի ֆունկցիաներով: Բանակն ունի արտաքուստ աննկատելի, բայց ոչ պակաս կարևոր մի առաքելություն ևս. դա ազգային ինքնագիտակցության ամրապնդման և ազգի ոգեղեն համախմբվածության ապահովումն է:

Հնորհավոր տոնը, Հայոց բանակ: Փառք Հայոց բանակին, նրա զինվորին ու հայ ժողովրդին:

Մարիամ Մարկոսյան
ոստիկանության ավագ սերժանտ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԵՐԴՈՒՄԸ



«Ծառայության անցնելով ՀՀ ոստիկանությունում՝ երդվում եմ. Հավատարիմ լինել ՀՀ սահմանադրական կարգին, անվերապահորեն ղեկավարվել օրենքներով, պաշտպանել հայրենիքս, պահպանել պետական և ծառայողական գաղտնիքը»:

Հենց այս խոսքերով Կրթահամալիրի ուսումնական կենտրոնի նախնական մասնագիտական կրթության «ոստիկան» որակավորման եռամսյա դասընթացն անցնող սովորողները հունվարի 29-ին երդվեցին անմնացորդ ծառայել հայրենիքին և ժողովրդին:

Երդման հանդիսավոր արարողությանը ներկա էին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանը, Կրթահամալիրի ղեկավար կազմը, ուսումնական կենտրոնի անձնակազմը և սովորողների հարազատները:

Կրթահամալիրի պետը Հնորհավորեց սովորողներին՝ մաղթելով մասնագիտական բարձունքներ:

Երդման արարողությունն ավարտվեց հանդիսավոր երթով:

ՄՐՏԻ ԹԵԼԱԴՐԱՆՔՈՎ ԵՎ ԱԶՆԻՎ ՆԿԻՐՈՒՄՈՎ



Կատարվող ծնամուտները են պայմանավորված յուրաքանչյուրի նախասիրություններով, հետաքրքրություններով, դաստիարակությամբ, մտածելակերպի առանձնահատկությամբ, անգամ հոգեվիճակով ու հոգեկերտվածքով:

2008թ. Արա Թորոսյանի պարտադիր ժամկետային ծառայության երկրորդ տարին էր: Մարտական պահակակետում հարաբերական անդորր էր, իսկ շարքային Արայի հոգում անհանգստություն կար. կավարտի ծառայությունը, կվերադառնա տուն, իսկ հետո՞, հետո ինչ՞ով կզբաղվի...

Գիշերային երկինքն աստղածոր կախվել էր Արայի գլխավերևում: Քնած էր բնությունը, քնած էին մարտական ծառայությունն ավարտած ծառայակից ընկերները, իսկ ինքն աչալուրջ էր և աչք ու ականջ դարձած դիտանցքից հետևում էր խավարի մեջ մերթընդմերթ լսվող թշնամու կրակահերթերի ուղեծրերին: Երբ վտանգներից հեռու ես, խառնվում են իսկական ու կեղծ արժեքները, իսկ մարտական խրամատում այլ է. այնտեղ չկան թվացյալ ու պատիր արժեքներ: Հենց այդ իրավիճակում Արան որոշեց ծառայությունից հետո դարձյալ զինվորագրվել, զինվորագրվել այս անգամ արդեն ոստիկանությանը, քանի որ Հայրենիքի սահմանների անառիկությունից ոչ պակաս կարևոր են հարազատ ժողովրդի

պաշտպանվածությունն ու բարօրությունը:

2009թ. ավարտելով ծառայությունն Արցախի Հանրապետության Հաղորթի 1-ին պաշտպանական շրջանում Արան մույն տարում ընդունվեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիան, և չորս տարի հետո՝ 2014թ., մասնագիտական գիտելիքներով ու հմտություններով օժտված՝ լեյտենանտի ուսադիրներով երիտասարդը նշանակվեց ոստիկանության Սևանի բաժնում որպես քրեական հետախուզության օպերիվագոր, իսկ երկու տարի հետո՝ 2016թ. ապրիլին, նշանակվեց մույն բաժնի անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքում որպես տեսուչ: Մասնագիտական պրոֆեսիոնալիզմը, ծառայության նկատմամբ պատասխանատվությունն ու նվիրումը կարճ ժամանակահատվածում տվեցին ցանկալի պտուղներ. ոստիկանության կապիտան Արա Ալբերտի Թորոսյանը 2020թ. հունվարին Գեղարքունիքի մարզում ճանաչվեց ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման լավագույն տեսուչ:

Հարգելի Արա, քո հարազատ կրթօջախի՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ղեկավարության և պրոֆեսորադասախոսական կազմի անունից շնորհավորում ենք Ձեզ ծառայության մեջ գրանցած լուրջ հաջողությունների և նվաճումների համար, ցանկանում, որ առաջիկայում և ունենաք նոր ձեռքբերումներ ու հաղթանակներ մեր ժողովրդի անդորրն ու բարօրությունը պահպանելու բարդ, բայց միաժամանակ պատասխանատու գործում: Ձեր ու ձեզ նման նվիրյալների շնորհիվ է, որ շարքային քաղաքացու հավատն առ ոստիկանություն և պետություն գնալով ավելի ու ավելի է ծավալվում ու խտանում:

Շնորհակալություն...

Ռ. Մուսաբեյան
լեզուների ամբիոնի դոցենտ,
ոստիկանության գնդապետ

ՄԵՐ ԼԵԶՈՒՆ ՄԵՐ ԿՇԻՌՆ Է ԱՇԽԱՐՀԻ ՄԵՋ

ՈՒ տե՛ս, որդի՛ս, ուր էլ լինե՛ս, Այս լուսնի տակ ուր էլ գնա՛ս, Թե մորդ անգամ մտքիդ հանե՛ս, Քո մայր լեզուն չմոռանա՛ս:

Ս. Կապուտիկյան

1999 թվականից ՅՈՒՆԵՍԿՕ-ն փետրվարի 21-ը հռչակել է Մայրենի լեզուների իրավունքների ճանաչման և գործածության աջակցման միջազգային օր: Այն աշխարհում սկսել են նշել 2000 թ. փետրվարի 21-ից, իսկ Հայաստանում՝ 2005 թվականից:

Աշխարհի շատ ժողովուրդների ինքնության կարևոր նախապայմաններից մեկը եղել է լեզվի գոյությունը: Հայ ժողովրդի մշակութային ժառանգության զանազան մասնամասերում ու թանկագին հրաշալիքը հայոց լեզուն է: Հայերենը աշխարհի հնագույն լեզուներից է, որի ձևավորումը հանրակրթական է հայ ժողովրդի կազմավորմանը և զալիս է վաղնջական ժամանակներից: Բավական չէ ազգասեր ու հայրենասեր լինելը, պետք է սիրել, պաշտել հարազատ լեզուն: Յուրաքանչյուր հայիս գոյությունն ու ինքնությունն սկսվում է լեզվից, ու մեր ականջին հնչած առաջին մեղեդիների հետ ծնվում է հազարազանգ հայոց լեզուն, մեր ոսկեդեմիկը, որում միտքն անսահման ազատ է, հոգին անեզր: Այդ անսահմանի, անեզրի մեջ էլ ապրում է հայի վսեմ ոգին: Հայոց լեզուն մշտանորոգ ու կանգուն պահելն ավելի է վսեմացնում նրա ինքնությունը: Մեր խիղճը մեր լեզուն է, մեր սրբությունը, քանի որ օրհասական պահին ավելի շատ գոյատևել ենք լեզվով, քան համապատասխան հացով: Մարմնական ուժի դեմ հոգու գոյություն, ահռելի բազկի դեմ՝ հուժկու կամք, հանրնդհանրության դեմ՝ վառ ինքնություն, ու ծնվեց արդար կանչը՝ «Ճանաչել գիմաստություն և գխրատ, իմանալ զբանս հանձարոյ...»: Հազարազանգ հայերենը դարձավ Աստծո հետ խոսելու, աղոթքի լեզու, դարձավ երաժշտություն, պերճություն, ուժ, ճկունություն ու... համը մեր բերանի:

Լեզուն մեր մտքերն արտացոլող կախարդական բանալին է, մեզ տրված աստվածային պարգևը, մեր առաջին թոթովանքը, մեր գոյությունը, մեր ապրած բոլոր զգացմունքները, մեր սերն է, սիրո անուշ շշուկների վերածված առաջին խոստովանությունը, ասված ու չասված թաքուն մտքերը, կարոտի կանչը, մեր սպասման թախիծը, ապրած տառապանքը, ցավի ու հիասթափության արձագանքը, վշտի մորմոքն ու մեր անբառ արցունքները և վերջապես լեզուն հենց մենք ենք: Դարերի խորքից սկիզբ առած ու հավերժության ձգտող լեզուն իր մեջ ապրեցնում է կարոտը, աղանդի պես խտացված հայրենիքի կանչը: Հայրենիքը նախևառաջ լեզուն է՝ ինքնարտահայտող ու չփոխակերպվող: Ժամանակի քառսուն ուսուցչապետ Մեսրոպ Մաշտոցի շնորհիվ ինքնաճանաչումը, հույսն ու հավատը դարձան զալիքի երաշխիքներ: «Լինե՞լ, թե՞ չլինե՞լ» հարցին միանշանակ «լինե՛լ» ասելով՝ Մաշտոցն անասելի երկբայությունը դարձրեց հաստատականություն, ու մայրենին դարձավ աղը մեր ինքնության: Ունեցանք մեծ հավատ, հզոր մշակույթ, որ հային հայ պահեցին աշխարհում, ուժ ու իրավունք տվեցին նոր քաղաքակրթությունների ու ինքնադրսևորման պայքարում մեր տեղը հաստատելով արևի տակ: Եվ քանի դեռ հայ մանկան շուրթերից հնչում է հայերեն այբ-բեն-գին-ը, մի ողջ ժողովրդի սկիզբն ու շարունակությունը կդառնան հավերժի ընթացք:

Դարերի խորքից մեզ ընծայված սուրբ լեզուն եղել է մեր զենքը և պաշտպանը՝ օգնելով մեզ չծուլվել այլ ազգերին: Մեր նախնիները մեր տեղը հաստատելով արևի տակ: Եվ քանի դեռ հայ մանկան շուրթերից հնչում է հայերեն այբ-բեն-գին-ը, մի ողջ ժողովրդի սկիզբն ու շարունակությունը կդառնան հավերժի ընթացք:

Դարերի խորքից մեզ ընծայված սուրբ լեզուն եղել է մեր զենքը և պաշտպանը՝ օգնելով մեզ չծուլվել այլ ազգերին: Մեր նախնիները մեր տեղը հաստատելով արևի տակ: Եվ քանի դեռ հայ մանկան շուրթերից հնչում է հայերեն այբ-բեն-գին-ը, մի ողջ ժողովրդի սկիզբն ու շարունակությունը կդառնան հավերժի ընթացք:

Ինչպես ասել է մեծն բանաստեղծ Համո Սահյանը.

Նա պիտի մեր առաջին ու վերջին սերը լինի,
Ի՞նչ ունենք էլ աշխարհում,
Որ այսքան մերը լինի...

Լիանա Խրշոյան
ոստիկանության լեյտենանտ

ՆԱ ՄԻՇՏ ՄԵՋ ՀԵՏ Է, ՄԵՐ ՄԵՋ Է

Այս տարի՝ փետրվարի 19-ին, լրացավ ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի 150-ամյակը:

Դեռևս տարիներ առաջ մեծ բանաստեղծի օրը Երևանի գրողների միությունը հայտարարեց «Գիրք նվիրելու օր»:

Այդ օրը համայն հայության համար արևոտ ու լուսավոր օր է, որովհետև Մեծ հայն իր հյուրասեր, հյուրընկալ և արևոտ տեսակով արև է դարձրել մեր օրը. դուրսը, ներսը:

Օրն արևոտ էր նաև Թբիլիսիում այն տանը, որտեղ ապրել էր բանաստեղծն իր բազմադարյան ընտանիքով, և որն այժմ հայկական մշակույթի կենտրոնն է:

Մեծ բանաստեղծը մեր անձնագիրն է աշխարհի առջև, որը հպարտությամբ ենք կրում, ու որի շնորհիվ երկար դարերով գնում ենք դեպի վեր:

Նա միշտ մեզ հետ է, մեր մեջ է:

Հ. Թումանյանն այն եզակի գործիչներից է, ում գրական հարստությունն այնքան բացառիկ է ու մեծ, որքան նրա մարդկային կերպարը: Նրա կյանքի բազմաթիվ դրվագներ մեկտեղվում, զուգահեռվում են հայ ժողովրդի ճակատագրի հետ:

Մեծ բանաստեղծն ապրեց իր ժողովրդի համար բարդ ու դժգոհ ժամա-

նակներում: Նա խորապես ապրում էր հային բաժին ընկած յուրաքանչյուր դառնություն, և ոչ միայն ինքը, նաև իր ընտանիքը. նրա չորս որդիները զինվոր էին, իսկ չորս դուստրերը՝ գթության քույրեր:

Դեռ 1913 թվականին նա իրեն բնորոշ իմաստությամբ արդեն կանխատեսել էր 1915 թվականին թուրքերի հրեշավոր քայլերը:

1915 թվականին ոտքով անցնելով ողջ կովկասյան ռազմաճակատով՝ անձամբ է ականատես եղել թուրքերի վայրագությանը ու իր նոթատետրում թողել է այնպիսի սահմնկեցուցիչ գրառումներ, որ մեկ դար անց անգամ կարդալիս մարմնովդ սարսուռ է անցնում:

Ողբերգությունը սրտում, անասելի ցավը հոգում՝ Թումանյանը Թիֆլիսից շտապում է Էջմիածին, որտեղ հավաքվել էին հազարավոր որբեր՝ խոշտանգված հոգիներով. նրանք ականատես էին եղել իրենց ծնողների, հարազատների ամենավայրագ սպանություններին:

Այդ որբերին տեղավորելու համար Էջմիածնում, Երևանում, Թբիլիսիում, Բաքվում բացվել էին մանկատներ, ու այդ բոլորի հետ սերտ կապի մեջ էր մեր Մեծ բանաստեղծը:

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒՆ ՍԱՀՄԱՆԻՆ ԿԱՆԳՆԱԾ ԶԻՆՎՈՐՆ Է. ՆՐԱ ԴԵՍ ԱՆՁՈՐ Է ԹՇՆԱՄԻՆ

Մայրենի լեզվի միջազգային օրն առանձնահատուկ ձևով նշվեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրում. լեզուների ամբիոնի նախածեռնությամբ քոլեջի սովորողների և ակադեմիայի առաջին կուրսեցիների շրջանում անցկացվեց մայրենիին նվիրված դատողությունների մրցույթ, որին մասնակցեցին մոտ հարյուր սովորողներ: Ներկայացված աշխատանքներից ընտրվեցին լավագույնները: Այսպիսով՝ հաղթող ճանաչվեցին կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի առաջին կուրսի 2-րդ դասակի սովորողներ՝ Գրիգոր Կոստանդյանը, Գևորգ Պետրոսյանը, Արմինե Սահակյանը, Արթուր Բաղդասարյանը:



Ստորև ներկայացված են լավագույնները:

- * Մայրենի լեզուն սահմանին կանգնած գիմկորն է. նրա դեմ անգոր է թշնամին:
Գրիգոր Կոստանդյան
- * Դայ ժողովրդի համար հայոց լեզուն շունչ է, իսկ առանց շունչ կյանք գոյություն չունի:
Գևորգ Պետրոսյան
- * Չսիրել մայրենի լեզուն, ասել է՝ ուրանալ նրան, ով քեզ Աստծո լույսը տեսնելու շնորհ է տվել:
Արթուր Բաղդասարյան
- * Թե գեթ մեկ անգամ խոսես հայերեն, Շուրթիդ կհորդեն գամն ու ոսկեղեն: Չէ՞ որ այդ լեզվով «Նարեկն» է գրվել, Այդ լեզվով Նժդեհի բանակն է կռվել...
Արմինե Սահակյան

Յետաքրքիր ժամանակաշրջան ենք ապրում. տարիներն իրենց հետ ազգային դիմագիծ են նորոգում, վերականգնում, ու 21-րդ դարում ծնված երիտասարդներն այսօր շատ ավելի տեղյակ են մեր ազգային ծեսերից, քան աթեիզմի տարիներին ձևավորված մեր շատ հայրենակիցները: Ձարմանալի է, որ հատկապես երիտասարդությունը գիտակցված ընտրությամբ է վերադառնում մեր արմատներին և այն հաջողությամբ ներառում թվայնացված միջավայրում:

Քայլ առ քայլ վերածնվում են մեր ազգային շատ ավանդույթներ, եկեղեցական ու ժողովրդական տոներ: Վերադարձել է նաև Բարեկենդանը: Այսօր տոնը ոչ միայն Հայ Առաքելական Եկեղեցին է նշում, այլև շատ երիտասարդներ:

Բարեկենդան նշանակում է բարի կենդանություն: Այն ուրախության ու զվարճանքի օր է, հիշեցնում է Աղամի և Եվայի դրախտային կյանքը, երբ նրանք ապրում էին վայելքի ու անհոգության մեջ:

Նախկինում դրանք հեթանոսական տոնախմբությունների օրեր էին, կատարվում էին փետրվարին կամ մարտի սկզբին: Տոնը հավանաբար կապ ուներ գարնան սկսվելու հետ: Եվ պատահական չէին զվարճությունները, որոնք արթնացող բնությանն ուրախ դիմավորելու, մարդկանց վերականգնացնելու խորհուրդ ունեին: Մարդիկ մաղթում էին միմյանց բարի կենդանություն: Հետագայում քրիստոնեությունը հարմարեցրեց իրեն և դարձրեց Մեծ Պահքի նախորդող շաբաթվա տոն, որը նշվում էր կերուխումով, մասսայական խաղերով, մրցումներով, թատերախաղերով, պարերով և այլն: Այն տևում էր երկու շաբաթ՝ անմիջականորեն հաջորդելով Ս. Սարգսի տոնին և ավարտվելով Մեծ Պատով: Մեծ Պահքին նախորդող կիրակին բուն Բարեկենդանի օրն էր: Պահքի կարևոր լինելը մարդկանց ցույց է տվել Քրիստոսը: Նա անապատում 40 օր է անց-

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ՝ ՈՒՐԱԽՈՒԹՅԱՆ ՈՒ ԶՎԱՐՃԱՆՔԻ ՕՐ

կացրել: Մարդիկ Հիսուս Քրիստոսի օրինակով են պահում Մեծ Պահքը: Մեծ Պահքի 40 օրերին գումարվել են նաև Ջատիկին նախորդող 9 օրերը, և այն տևում է 49 օր: Մեծ Պահքն ավարտվում է Ջատիկի՝ Հիսուս Քրիստոսի Հարության տոնով:

Բարեկենդանն այնքան սիրված, սպասված ժողովրդական տոն էր, որ հայ ազգի կողմից այն ընկալվում էր որպես ազգային ամենաերջանկաբեր, խրախուսիչ, ճոխ ու առատ ուտելիքներ վայելելու տոն, պարերի, խաղերի, զվարճահանդեսների, թատերախաղերի, այցելությունների և ուրախության երկու շաբաթ: Նախապատվությունը տրվում էր մեծերին, կաթնեղենի, յուղի առատությամբ: Տավարի, ոչխարի և թռչնեղենի մսից պատրաստում էին զանազան ճաշատեսակներ: Առաջին օրերին պատրաստում էին մեծ քանակությամբ գաթա ու հալվա: Երեկոյան ուտում էին կաթնապուր, մածուն, խաշած ձու: Պատրաստում էին փաթիլա, սոռն, բիսիտիկ: Որոշ տեղերում նախապատվությունը տրվում էր փոքր ծավաղով ու զանազան համեմունքներով լցոնած և թոնիրում ամբողջովին խորոված ոչխարին կամ տվյալ վայրում առավել սիրված կերակրատեսակներին: Պարտադիր ճաշատեսակը խաշիլն էր, որով սկսվում էր տոնը և երկու շաբաթում պատրաստվում բոլոր տներում: Տանտիկիներն իրենց պահած մթերքներով շաշլորեն հյուրասիրում էին ընտանիքի անդամներին և հյուրերին: Վերջին օրը՝ երեկոյան, կաթնապուր ու մածուն էին ուտում, վրայից՝ խաշած ձու՝ ասելով. «Բերաններս փակում ենք սպիտակ ձվով: Աստված արժանացնի կարմիր ձվով բաց անելուն»,- ակնարկելով, որ ասի սկսվում է Մեծ Պատը, որի 49 օրերի ընթացքում այլևս ձու չպիտի ուտեն մինչև Ջատիկ: Որոշ տեղերում ձուն խաշելու փոխարեն

ծվածեղ էին պատրաստում: Տոնին պատրաստվում և մասնակցում էին բոլորը՝ մեծ թե փոքր: Չնայած ամենուր դեռ ձյուն էր, ցուրտ, սակայն դա չէր խանգարում, որ մարդիկ ամենատար լինեն զվարճություններին: Երկու-երեք օր առաջ կանայք և տղամարդիկ դադարում էին աշխատել, զանազան խաղեր էին խաղում, զվարճանում երեխաների պես, անգամ ծերունիներն էին առանց քաշվելու միանում այս կամ այն խմբին: Այդ օրը հիշում էին նաև պանդխտության մեջ գտնվողներին ու երգում էին հատուկ տաղեր: Այդ խմբույքը շատ տեղերում ջնջում էր բոլոր տարբերությունները. «Իրար հետ սեղան էին նստած ծերունի սկեսրայրն ու մանկամարդ հարսը, տղամարդ, կնիկմարդ, բոլորը միասին վայելում էին գաթա, հալվա, լոխում, հավկիթ, սեր, կարագ, մատակի մածուն, նոր ծնած կովի դալ, հավ, սագ, գառ, ոչխարի կամ կովի դավուրմա, քյուֆթա, տոլմա, փլավ, յախնի...»,- այսպես էր ավարտվում Բարեկենդանը Ջավախքի պահպանողական հայերի մոտ:

Հարսանիքներն ու նշանդրեքները Բարեկենդանի անբաժան ուղեկիցներն էին: Դրանք, իրենց հերթին, նոր թափ էին հաղորդում տոնի ուրախությանը: Բարեկենդանի գլխավոր զվարճությունը, սակայն, դիմակավոր խաղերն ու թատերական ժողովրդական ներկայացումներն էին (առհասարակ, դեռ հնագույն ժամանակներում, տոնախմբությունների, թատերական ներկայացումների կամ որսորդության ընթացքում հայերը դիմակ հագնելու սովորություն ունեին): Ներկայացումների ժամանակ ծիծաղախառն կատակներով քննադատության էին ենթարկվում մեծավորներն ու իշխանավորները: Հավաքվում էին մեծ ու փոքր, մի կողմ էին դրվում պետական կամ եկեղեցական օրենքները, ամեն մարդ առանց քաշվելու ասում էր իր

խոսքը: Նույնիսկ եկեղեցին է այդ օրը խստակենցաղ հոգևորականների համար սահմանել որոշ ազատություն: Փաստորեն, բուն Բարեկենդանը, բացի խրախուսիչ, կերուխումից, նաև ազատության օր էր: Երեկոյան, երբ խնջույքներից հոգնած մեծերը հավաքվում էին տանը, դուռը թափով բացվում էր, և աղմուկով, երգով, թմբուկով ներս էր ընկնում դիմակավորված երեխաների խումբը: Տղաները հազած էին լինում աղջիկների հագուստ, փոքրերը՝ մեծի, երբեմն՝ ծաղրածուի: Արտաքինը պիտի հնարավորինս ծիծաղաշարժ լիներ, դեմքերին դնում էին ծիծաղելի դիմակներ կամ մուր, այլուր քսում, ածուխով ներկում: Երեխաները տեսարան էին ներկայացնում գյուղի կյանքից կամ խաղում էին որևէ սրամիտ սյուժե («Բեկ ու զգիր», «Պարոն զգիր», «Գող և փաշա» և այլն):

Բարեկենդանի օրը խելահեղության էին հասնում խնջույքները, պարերը, խաղերը: Այն տևում էր երկու շաբաթ՝ անմիջականորեն հաջորդելով Ս. Սարգսի տոնին և ավարտվում Մեծ Պատով: Մեծ Պահքին նախորդող կիրակին բուն Բարեկենդանի օրն էր: Այս տարվա եկեղեցական օրացույցով այն փետրվարի 23-ին է:

Այսօր շատ ընտանիքներ ոչ միայն հիշում, այլ նաև նշում են այս խորհմաստ օրը: Եվ իրականում սա ևս լավ առիթ է ընտանիքին մի սեղանի շուրջ հավաքելու, նոր ճաշատեսակներ փորձելու, ասորեական մտահոգիչ հոգսերից կտրվելու ու լիաթոք զվարճանալու համար: Առաջավորաց պահքի շրջանն սկսում է փետրվարի երկուսից, և փետրվարին սեղանը ցանկալի է պարբերաբար գտնողներին տոնի տրամաբանության մեջ մտնող ուտեստներով:

Դե ինչ, մեզ մնում է միայն հավատարիմ մնալ ազգային տոներին ու ավանդույթներին և չմոռանալ, որ դրանք մեր ինքնությունն ու դիմագիծը հաստատող կարևոր կնիքներն են:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ Է



նման պաշտպան դաստիարակելու համար: Դուք, հիրավի, կարող եք հպարտանալ, որ մեծացրել ու դաստիարակել եք նախնիների սխրանքով ու պատգամներով տոգորված զավակ, ով, հավատարիմ զինվորի երդմանը, անձնուրաց ծառայում է հայրենիքին, անտրտունջ տանում է զինվորական ծառայության դժվարությունները: Վստահ կարող եմ ասել, որ Երիկ Թամոյանն արժանի է հայրենիքի պաշտպանի բարձր կոչմանը...»

Այսօր էլ Երիկը, շարունակելով ծառայությունը վերոնշյալ զորամասում, բարձր է պահում սեփական ընտանիքի և հարազատ բուհի՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պատիվը, որտեղ մինչև զորակոչվելը սովորել է վճարովի հիմունքներով և ընդամենը երկու կիսամյակում հասցրել է ճանաչում ձեռք բերել նաև իր տաղանդի շնորհիվ: Կանցնեն սպասումներով ու կարողավ պարուրված ևս մի քանի ամիս, ու կվերադառնա Երիկը քաղաքացիական կյանք՝ ավելի առնականացած, ավելի կազմակերպված ու հասունացած, կշարունակի ուսումը նախընտրած բուհում, և բեմից դարձյալ կլսենք նրա յուրահատուկ խոսքն ու հունորը:

Բարի ծառայություն քեզ, զինվոր: Մենք սպասում ենք քո վերադարձին:

Ռ. Մուսաելյան
լեզուների ամբիոնի դոցենտ,
ոստիկանության գնդապետ

ՆԱ ՄԻՇՏ ՄԵՋ ՀԵՏ Է, ՄԵՐ ՄԵՋ Է

3 ◀ Իրեն բաժին հասած ճակատագիրը նրան դարձրեց խտացված սիրտ, կամք և միտք, ու զորանալով այդ առաքելությամբ՝ դարձավ իր ժողովրդի հոգու բժիշկը: Նրա կախարդական գրիչը հենց թղթին էր դիպչում, կարծես դարավոր գանձարանից հանած, կարմիր արևի տակ աճած ու կենդանի լեզուն Լոռվա կուրսական լեռներից, կարկաչուն, զուլալ աղբյուրներից է հորդում, ու ամեն մի բար հերոսական անցյալի խոսող վկան է դառնում: Նրա առակները, քառյակները, պատմվածքները, հովվերգություններն ու վիպերգերը տիեզերական զորությամբ գրչին հանձնված գանձեր են, որով հպարտանում է հայն աշխարհի բոլոր ծայրերում:

Նրա գրեթե բոլոր բանաստեղծությունները կարելի է երաժշտության վերածել. այնքան հուզական ու հնչուն են դրանք:

Ամենայն հայոց բանաստեղծը մահվան մահճուն բժշկին հարցնում է՝ ի՞նչ է մարդը, բժիշկը պատասխանում է՝ մարդը ոչինչ է: Թունամյանը

նրան ուղղում է՝ մարդն ամեն ինչ է: Հավանաբար հենց այս երկխոսության մեջ է ամփոփված Թունամյանի կյանքի բանաձևն ու կարգախոսը:

Իրոք որ, մարդը նրա համար ամեն ինչ էր. հենց դրա համար էլ նա պատրաստ էր ինքնամոռաց, անվերջ զոհաբերել իրեն հանուն իր ժողովրդի:

Եվ մենք այսօր հպարտ ենք, որ 2017 թվականի նոյեմբերին Փարիզում ՀՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում տեղի ունեցած զլխավոր կոնֆերանսի 39-րդ նստաշրջանի ժամանակ Կոմիտասի և Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյա հոբելյաններն ընդգրկվել են «ՀՈՒՆԵՍԿՕ-ի» Հռչակավոր մարդկանց և կարևոր իրադարձությունների» 2018-2019 թվականների օրացույցում:

Մեր Մեծ բանաստեղծը սիրտ և համերաշխության խորհրդանիշ է:

Եկեք ապրենք թունամյանական ոգով. լինենք համերաշխ, ներենք ու սիրենք միմյանց:

Արուսյակ Քոչարյան

ՍՏԵՂՃԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐՈՆԸ

ԱՐԺԵՔԻ ԳԻՆԸ (Ս. Հ.-ին)

Թվում է անփայլ դեմքը անեղծի, Եվ մաքուր սերը խաբկանք չի բերում, Մերժում ենք ձեռքը Ամենաստեղծի, Ու փայլ-խաբկանքն է մեր սիրտը գերում:



Թվում է անշուք լռությունը մեր, Ու մեզ չի թվում անպատրանք հինը, Որքան փայլուն է մոտեցումը մեր, Բարձր է այնքան խոսքերի գինը:

Ահա թե ինչու հրապուրվում ենք, Կարծեցյալ նորը վեր դասում հինը, Խաբկանքով տարված՝ զոհաբերում ենք Մեծ արժեքները փայլերի գնին...

Ռուսլան Մարանյան
ակադեմիայի պետի տեղակալ,
ոստիկանության փոխգնդապետ, ի.գ.թ.

ՄԵԾ ՀԱՐՑԱԿԱՆ

Դու գնացիր, էլ հետ չե՞ս գա, Դու գնացիր, էլ սեր չե՞ս տա. Սիրուց դրժված, Խելքս կորցրած, Հոգիս տրտմած, Ընդարմացած... Թողիր անցար, թողիր անճար: Ու հետայսու հոգիս անչար էլ հարց չի տալու՝ էլ սեր չե՞ս տալու, հետ չե՞ս դառնալու: Քո լռությունը կարդացի, սակայն, Կարդացի հուշիկ, կարդացի անձայն էլ հետ չե՞մ գալու, սերս չե՞մ տալու...



Լյուսյա Գևորգյան
իրավագիտության ֆակուլտետ,
1-ին կուրս